ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿԸ (ՊՈԼՍԻՑ ՊՈԼԻՍ՝ 1878-1922 ԹԹ.)

Բանալի բառեր *– բանաստեղծ, ազգային գործիչ, խմբագիր, հայ, կենսագրություն, Հայաստան, Կ. Պոլիս, ժողովածու, նվիրում, թախիծ, արևմտահայ գրականություն*

Մեծ գրողների կյանքի առանձնահատկություններից մեկն այն է, որ նրանք իրենց գործով ու մտածումներով բացահայտում են նաև իրենց ապրած ժամանակաշրջանը, հաճախ անգամ՝ բնութագրում քաղաքական ու պատմական տեղաշարժերը, որոնց վկան և կամ մասնակից են եղել:

Վահան Թեքեյանը այդ մեծերից է: Նրա կյանքի բարդ ընթացքը հարուստ է հայ ազգային գործընթացների, կուսակցական, հասարակական ու գրական ընդգրկումների հարուստ ենթաշերտերով, որոնք տեղիք են տալիս ոչ միայն տարաբնույթ մտորումների, այլև օգնում են խորքից հասկանալու գրողի ստեղծագործական որոնումներն ու նվաճումները: Նա այն մարդը չեղավ, ում կենսագրությունը ամփոփվում է երեք բառով՝ ծնվեց, ապրեց, մահացավ: Նրա կյանքը լեցուն է բազմաբնույթ դեպքերով, և գրեթե ապրած ամեն մի օրը բեկվել է արյունոտ XX դարի մեր պատմության աղետալի իրադարձություններից, խռովել նրա հոգին՝ նրան մղելով տխրության ու թախիծի, ըմբոստության ու նզովքի, անհուսության ու հույսի խոսք ուղղելու իր ժամանակակիցներին ու հայ գալիք բոլոր սերունդներին:

Վահան Թեքեյանի կյանքը, ցավոք սրտի, մինչև այժմ ամբողջական ուսումնասիրության չի ենթարկվել մեզանում, ըստ ամենայնի ամբողջական համապատկերի բերված չէ նաև նրա ստեղծագործական աշխարհը: Գնահատելի են Միքայել Կյուրճյանի, Արշակ Ալպոյաճյանի, Ավետիս Սանճյանի, Վաչե Ղազարյանի, Երվանդ Ազատյանի, Վազգեն Գաբրիելյանի, Գեղամ Յագուբյանի, Թամարա Հովհաննիսյանի՝ Թեքեյանի կյանքին ու գործին վերաբերող ուսումնասիրությունները, որոնք նաև սկզբնաղբյուրի դեր ունեն, և որոնցում շեշտը դրված է բանաստեղծի գրական ու հասարակական գործունեության տարաբնույթ իրողությունների և ստեղծագործական մի շարք վավերական փաստերի ու արժեքների վրա: Այդուհանդերձ, մինչև այժմ ի մի հավաքված ու ամբողջական շարադրված չէ Թեքեյանի կենսագրությունը, և մանավանդ գրեթե մի կողմ են թողնվել ապրող ու տառապող մարդու և ստեղծագործող անհատի հոգեկան ու հուզական տվայտանքները, մարդկային ցավերի այն ուղիները, որոնցով ստիպված քայլել է մեծ բանաստեղծը,

որոնցում հաճախ այրվել ու փոթորկվել է նրա վիրավոր սիրտը:

Թեքեյանի մասին սպառիչ խոսք ասելուն խանգարել է նաև այն հանգամանքը, որ գրողը ստիպված է եղել ապրել աշխարհի չորս ծագերում, բնակավայրից բնակավայր տեղափոխվել, որի պատճառով նրա գրությունների մի մասը ցայսօր շարունակում է մնալ անհայտ, տարբեր երկրներում լույս տեսած մամուլի չթերթված էջերում՝ դրանով իսկ խանգարելով ի մի հավաքել նրա կյանքի բազում մանրամասները և ամբողջացնել ստեղծագործական որոնումները:

Թեքեյանը ապրել է հայ ժողովրդի պատմության ամենաճակատագրական ժամանակաշրջաններից մեկում, որը Դ. Վարուժանը իր «Մատյանն ահա» քերթվածում դիպուկորեն բնութագրեց «Հիսուսի պես կարեվեր»: Տառապալից ու կորստաբեր, բայց և հուսաշատ այդ ժամանակի նման Թեքեյանը ունեցավ սլացման ու անրջանքի ոգևորություններ և նույնքան ու ավելի ապրեց տանջանքի ու ողբերգությունների անպատմելի փոթորկումների մեջ: Թեքեյանը, ինչպես իր ժամանակակից շատ գրողներ, միևնույն ժամանակ եղավ հասարակական ու ազգային գործիչ, խմբագիր ու ուսուցիչ, գործնական մասնակիցը հայոց կյանքի պայքարներին և որպես հրապարակախոս ու գրող գրեց այդ ամենի մասին ու իր ապրած կյանքով ու գործով իր ժողովրդի մարող հոգիների մեջ ջանաց եկեղեցի կանգնեցնել, քանի որ հայ մարդու ու Հայաստան աշխարհի անբեկանելի պաշտամունքով էր լեցուն:

Լինելով արևմտահայ *«արվեստագետ սերնդի»* (Դ. Վարուժան, Սիամանթո, Ռ. Սևակ*) ոսկե փաղանգի դեմքերից մեկը՝ նա ստեղծեց մի գրականություն, որը հար խոսելու է գալիք սերունդների հետ, նրան մղելու գնահատել գեղեցիկը և արժևորել արդարությունը:

Վահան** Թեքեյանը ծնվել է 1878 թ. հունվարի 8-ին (հին տոմարով՝ 21-ին) Կոստանդնուպոլսի Օրթագեո (Միջագյուղ) թաղամասում: Նա Գալուստ և Եղիսաբեթ ամուսինների վերջին զավակն էր: Մայրը, որ նշանվել էր յոթ տարեկանում և դրանով իսկ վերջ տվել *«քահանայի քով»* դպրոց հաճախելուն ու ազատ մանկությանը, իր ամուսնուն առաջին անգամ տեսել է հարսանիքի օրը. Թեքեյանին ունեցել է 40 տարեկանում: Ինչպես Թեքեյանն է գրում «Ծնունդ» վերնագրված բանաստեղծությունում, իր *«ծերացած»* ծնողները (հայրը 50 տարեկան էր) «*…օր մ'ալ…զարմանքով ու երկիւղով տեսան*

---

* Շարադրանքում փակագծի մեջ բերվող բոլոր ծանոթագրությունները մերն են - *Ա. Ա.*:

** Նա Վահան անունով է մկրտվել, քանի որ ծնվել է Սուրբ Վահան Գողթնեցու տոնի օրը: Ազգանվան արմատը՝ **Թեքէ**. պարսկերեն հենարան, նեցուկ, ապավեն է նշանակում: Արևմտահայերից ոմանք, գրողի ազգանվան առաջին մասը՝ **Թեք**, որ նշանակում է միակ, եզակի, նկատի ունենալով, այն օգտագործել են որպես գրողին բնութագրող եզրույթ: Նույն նպատակով նաև նոխազ բառը, որը թուրքերեն **թեք**-ի մեկ այլ թարգմանությունն է և կիրառվում է առաջնորդ իմաստով: Նախախնամությունը Թեքեյանին պիտի տար ոչ միայն սրբի խելացիությունն ու ուշիմությունը, այլև նրա կյանքին բնորոշ թափառական դեգերումները:

իմ գալս աշխարհ…»: Ծնողները կեսարացի* էին, որի համար Թեքեյանին ևս երբեմն կեսարացի էին համարում: Ինքը՝ Թեքեյանը, իրեն երբեմն կեսկեսարացի է համարել: Տնտեսական պատճառներով ընտանիքը տեղափոխվել է Իսկյուտար: Թեքեյանից զատ նրանք ունեին ևս երեք որդի և մեկ դուստր: Հայրը մահացել է 60 տարեկանում՝ 1889 թ., երբ Թեքեյանը հազիվ 10 տարեկան էր: Ավագ եղբայրը՝ Տիգրանը, վախճանվել է 30 տարեկանում, երբ ինքը դեռևս 8 տարեկան էր. դա անանց հետք է թողել պատանու հոգում՝ բնավորությամբ նրան դարձնելով մելամաղձոտ ու *«անժպիտ»* մարդ, իր բառերով ասած՝ *«մէկեն մեծացրին իրեն»* ՝ դարձնելով *«մարդոց մէջ մարդ»*: Պատանու ներաշխարհի վրա նաև մեծ ազդեցություն են գործել Գարիբալդիի և Վարդան զորավարի՝ տանը պահվող նկարները:

Թեքեյանն իր կրթությունը ստացել է Իսկյուտարի Իճատիեի Ներսիսյան դպրոցում, ապա ուսանել Պերպերյան վարժարանում: Թեև դեռ երկու տարի ուներ վարժարանը ավարտելու համար, սակայն 1891 թ. այն կիսատ է թողել Գ. դասարանից և ուսումը շարունակել Ազգային կեդրոնական վարժարանում, այնուհետև երկու տարի աշխատել ապահովագրական ընկերությունում որպես գրագիր: Ուսումնառության տարիներին Թեքեյանի ուսուցիչներից են եղել Ռեթեոս Պերպերյանը, Մելքոն Կյուրճյանը (Հրանդ), Միքայել Ասքանազը, իսկ վարժարանային ընկերներից՝ Սուրեն Պարթևյանը, Արշակ Ալպոյաճյանը, Միքայել Շամտաճյանը, որոնց ազդեցությունը ևս նպաստել է Թեքեյանի գրական հակումների զարգացմանը: Արշակ Ալպոյաճյանը վկայում է, որ պատանի Թեքեյանի վրա մեծ հետք է թողել նաև Եղիա Տեմիրճիպաշյանը, ով մի քանի տարի բնակվել է Թեքեյանի հայրական տան հարևանությամբ և իր խորհրդավոր կեցվածքով ակնածանք առաջացրել շրջապատում[1]:

Թեքեյանը գրել սկսել է 9 տարեկանից, իսկ արդեն 1890 թ. Պերպերյանի կրտսեր դասարանի իր ընկերների հետ լույս է ընծայել «Սիւգ» ձեռագիր թերթը, մասնակցել Ա. Ալպոյաճյանի և Հր. Էսայանի «Լուսին» անունը կրող նույնպես ձեռագիր թերթի աշխատանքներին: Առաջին տպագիր գործը, որը ընդամենը էջ ու կես էր, լույս է տեսել Կ. Պոլսի՝ Արփ. Արփիարյանի խմբագրած «Հայրենիք» օրաթերթի 1894 թ. նոր տարվա համարում՝ «Կաղանդը Կեսարիոյ մէջ» վերնագրով, որը ստորագրված էր Բ. Կ. Մ.: Սկսում է թղթակցել նաև «Տեսարան» հանդեսին, որտեղ տպագրվում է առաջին գեղարվեստական

---

* Ըստ Թեքեյանի ընտանիքում պահպանված ավանդության՝ իրենց նախնիները (յոթը ընտանիք) Պարսկաստանից (Համադանից) են ներգաղթել: Իր «Կեսարիա» օրագրությունում Թեքեյանը նշում է, որ այդ գերդաստաններից չորսը (որոնց թվում մայրականը՝ Արզրեանները, և հայրականը՝ Թէքէեանները) բնակություն են հաստատել Կեսարիայում, իսկ երեքը՝ քաղաքից ոչ հեռու գտնվող Թալաս գյուղում, որտեղ այգի ունեին նաև Արզրեանները:

[1] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Ալպոյաճեան Ա.,** Վահան Թէքէեան իբր հանրային մարդ եւ հրապարակագիր, Պէյրութ, 1988, էջ 19-20:

գործը՝ «Հպարտները» պատմվածքը: 17-18 տարեկան պատանին ականատեսն ու մասնակիցն էր դառնալու իր կյանքի վրա նույնպես մեծ հետք թողած երկու իրադարձության՝ 1894 թ. իր մորեղբոր՝ Մանուկ Արզրեանի շեն տան հրդեհվելուն և իրենց տանը պահվող հայերեն գրքերի՝ «…*Սրուանձտեանց, Աբովեան, Նալբանդեան, Ռաֆֆի, Ռոշեանց, Շահազիզեանց … Պէշիկթաշլեան…, ամէն անունք որոնց մէջ «Հայաստան» անունը կը հնչէր*…» ձերբակալվելու վախից՝ մոր ստիպմամբ իր իսկ ձեռքերով այրմանը, որի մասին նա պատմում է «Անահիտում» տպված իր «Խարույկը» պատմվածքում[1]:

1895 թ. Արշակ Չոպանյանը Կ. Պոլսում հրատարակվող իր «Ծաղիկ» թերթում տպագրում է Թեքեյանի «Ծովեզերքին վրայ» և «Ջութակը» արձակ քերթվածները՝ Վահան Թեքեյան ստորագրությամբ: Այդուհետ գրողը սկսում է թղթակցել Կ. Պոլսում, Փարիզում, Եգիպտոսում, Իզմիրում ու մի շարք այլ վայրերում լույս տեսնող հայ մամուլի զանազան օրգաններին:

1896 թ. Թեքեյանը անդամագրվում է Հնչակյան կուսակցությանը: Խուսափելով ջարդերից, անիրականալի թողնելով Արևմտյան Հայաստանի գավառներ մեկնելու և հայրենակիցներին օգտակար լինելու իր ծրագրերը, կանխազգալով իր անձին սպասվող վտանգները՝ ինչպես կուսակցական, այնպես էլ առևտրական գործերով մեկնում է Անգլիա (Լիվերպուլ), հաջորդ տարի տեղափոխվում Ֆրանսիա (Մարսել), ուր ապրում է շուրջ հինգ տարի: Այս ընթացքում աշխատակցում է «Վաղվա ձայնին», «Արմենիային», «Անահիտին», «Մասիսին», «Նոր կյանքին», թարգմանություններ կատարում ֆրանսերենից, անգամ բանաստեղծություններ գրում այդ լեզվով, մտադրվում սովորել գերմաներեն՝ «*բնագրէն կարդալ ու թարգմանելու համար*», թատերգություն և նորավեպ գրելու փորձեր կատարում, նամակագրական կապեր հաստատում մի շարք հայ գրողների ու մտավորականների հետ, ընտրվում Մարսելի հայության ընդհանուր ժողովի նախագահ, կազմակերպում մշակութային ու գրական միջոցառումներ, մի շարք ստեղծագործությունների թվում գրում է նաև «Պատմութիւնը ու ներկան» ծավալուն քերթվածը, որի վերաբերյալ Ա. Չոպանյանին գրել է. «…*ճնշման տակ* (նկատի ունի Վարդանանց տոնին նվիրված հանդեսի կազմակերպիչներին) *կրցա տեսնիլ, թէ կրնամ եղեր քիչ մը երկարաշունչ բաներ ալ գրել*»[2]:

Այս ընթացքում Սուրեն Պարթևյանի և Լևոն Բաշալյանի հետ եռհեղինակցում է «Գիշերապահը» գործը: 1900 թ. «Անահիտում» Վ. Տիրանյան ստորագրությամբ Թեքեյանը տպագրում է «Իրիկուն» և «Իրիկուան աղօթքը» բանաստեղծությունները, որոնցում նկատելի են որոշ խորհրդապաշտական երանգներ, հակում դեպի վերացական հույզերն ու զգացումները:

Մի շարք հայ մտավորականների (Ս. Պարթևյան, Ա. Շաքլյան, Գ.

---

[1] Տե՛ս «Անահիտ», 1900, Բ. Տարի, թիւ 9-11:

[2] **Թեքէեան Վ.**, Նամականի, Լոս Անջելոս, 1983, էջ 98: (Այս գրքից բերված մեջբերումները տեքստում այսուհետև կնշվեն միայն էջերով – *Ա. Ա.*):

Ֆնտգլյան) հետ Թեքեյանը 1901 թ. Փարիզում մասնակցում է «Ժողովուրդին համար» ամսաթերթի հիմնադրմանը, այստեղ տպագրում Դ. Վարուժանին գնահատող հոդված: Իր ստեղծագործական տարիների ընթացքում գրած արձակ ու չափածո անտիպ ու տպագրված բանաստեղծությունների մի մասը Թեքեյանը ընդգրկում է նույն տարում Փարիզում լույս տեսած «Հոգէր» ժողովածուում: Ասես կանխազգալով գալիք գռիհ ժամանակները՝ Թեքեյանի բանաստեղծական շատ տողեր ու արտահայտություններ լի էին տխրության ու հիասթափության պատկերներով: Գրքի առաջին բանաստեղծությունը՝ «Առաջին մահը», որն արտահայտում է Աստծո նկատմամբ բանաստեղծի դիրքորոշումը, սարսափ է առաջացրել Եղիա Տեմիրճիպաշյանի մոտ: Գրքում հատկապես շատ են կյանքի նկատմամբ հեղինակի զգացած անձկությունները, ներքին վրդովմունքը, թախծի տրամադրությունները, ըստ Ա. Չոպանյանի խոսքերի՝ «*հագուրդ չգտած իղձերու*» դրսևորումները, որոնց մի մասի պատճառը իհարկե նաև գրողի ընտանիքին պատուհասած մահերն էին:

Թեքեյանի բանաստեղծությունների առաջին գիրքը, ի տարբերություն Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Ռ. Սևակի առաջին ժողովածուների, հայտնություն չեղավ գրական աշխարհի համար, սակայն նրա վերնագիրը յուրովի խտացումը դարձավ հեղինակի գրական ամբողջ ուղու: Ժողովածուն հավանության չարժանացավ նաև գրաքննադատության կողմից: Թեքեյանի առաջին գրքի գրախոսականներից մեկին տրված վերնագիրը՝ «Հարբխոտ բանաստեղծ մը», որը տպագրվեց Կահիրեի «Փարոս» թերթում, և որի հեղինակը Միքայել Կյուրճյանն էր[1], արդեն շատ բան էր ասում: Բայց ասել, որ ստեղծագործական առումով տարին բեղուն չէր, սխալ կլինի, քանի որ հենց 1901 թ. Թեքեյանը գրեց իր գլուխգործոցներից մեկը՝ «Կ'անձրեւէ տղա՛ս» բանաստեղծությունը, ուր սիրուց *«խաբուած»* ու ճակատագրի *«գոց»* դռան առջև կանգնած տղային, որ նաև ինքն էր, հարցում պիտի աներ.

Կ'անձրեւէ՞ երբեմն հոգիիդ մէջ ալ,
Կը մրսի՞ սիրտդ, եւ կը դողդրդա՞ս...

Թեքեյանը վեց տարվա ընդմիջումից հետո՝ 1902 թ., վերադառնում է Կ. Պոլիս, սակայն 1896 թ. քաղաքից գաղտնաբար հեռացած լինելու պատճառով ձերբակալվում և երկու շաբաթ, իր խոսքերով ասած, վայելելով Կ. Պոլսի *«բանտի հիւրասիրութիւնը»* ՝ ետ է ուղարկվում Մարսել: Այստեղից մեկնում է Համբուրգ, ուր շուրջ տարիուկես մնալուց հետո կրկին վերադառնում է Մարսել:

Թե՛ համբուրգյան և թե՛ մարսելյան կյանքը ո՛չ ստեղծագործական, ո՛չ տնտեսական առումով Թեքեյանին չի գոհացրել, թեև 1902-1903 թթ. նա գրեց

[1] Տե՛ս «Փարոս», 17 հոկտեմբերի 1901:

«Հայրենի զրոյցներու վրայ» շարքը, իսկ 1903 թ.՝ «Գեղօն սոսեաց անտառին» քերթվածը, որի մասին Հ. Օշականը (Յ. Քիւուֆէճեան ստորագրությամբ) «Մեհեան» հանդեսում իրավացիորեն գրելու էր. «*Յեղափոխական գրականութեան տուած ամբողջ շքեղանքին, փաղփուն պատկերներին եւ արիւնավառ տեսիլներուն մէջ քիչ կայ հատուած, որ գաղափարին բարձրութեամբը, ձեւի նորութեամբը, թելադրած յուսահատութեան խորութիւնովը հաւասարի «Գեղօն Սոսեաց անտառին» քերթուածին*»[1]:

Ապրուստի շատ թե քիչ միջոցներ հայթայթելու համար Թեքեյանը ծրագրում է փոխադրվել Փարիզ, բայց չի գնում: Պատճառներից մեկը, ինչպես հայտնում է 1903 թ. Ա. Չոպանյանին գրած մի նամակում, իր բնավորության «*տկարութիւնն էր*». «*… եղած տեղէս բաժնուելու ու անծանոթին դիմելու՝ միշտ կապած, կաշկանդած է զիս*» (էջ 115): Վերոհիշյալ նամակը նշանավոր է նաև նրանով, որ Թեքեյանը բողոքում է իր վաճառական ընդունակություններից. «*… գէշ ու գէշեն գէշ վաճառական մըն եմ… արդեն երբեք չեմ կարծեր, որ գրագէտ մը կարենայ նաեւ յաջող առուտուրի մարդ ըլլալ. այնպէս բնական հակառակութիւններ կան երկուքին մէջը ու երկուքն ալ այնպէս տիրաբար կը պահանջէն ամբողջական նուիրումդ իրենց*» (նույն տեղում): Մտածում է տեղափոխվել Ամերիկա, սակայն 1904 թ. իր մի ազգականի հրավերով մեկնում է Ալեքսանդրիա, նորից սկսում զբաղվել առևտրական գործերով, դառնում Վերակազմյալ հնչակյան կուսակցության Եգիպտոսի նահանգային վարչության անդամ, խմբագրում «Ազատ բեմ» շաբաթաթերթը:

Ինչպես երևում է Սիամանթոյին ուղղված 1904 թվակիր Թեքեյանի նամակից՝ նա ծրագրում է *«բաներ մը ընել»,* որը և Պողոս Նուբար փաշայի ու Տիգրան Կամսարականի նյութական աջակցությամբ կարողանում է 1905 թ. իրականություն դարձնել՝ Ալեքսանդրիայում Միք. Կյուրճյանի հետ լույս ընծայելով «Շիրակ» ամսաթերթը, որի նպատակն էր «*աշխատիլ հայ դպրութեանց վերականգնումին*» համար, իր էջերը լայն բացել «*բոլոր ճշմարիտ ու վավերական գրագէտներուն առջեւ*»՝ հանուն *«ազգային վերածնումի գործին»*[2]:

Թերևս կարելի է ասել, որ մի քանի տարի՝ մինչև 1908 թ. օսմանյան սահմանադրության հռչակումը, Թեքեյանը ազգային, կուսակցական ու գրական գործունեության հարաբերական «*հանգիստ*» կյանք ապրեց և առավելապես զբաղվեց կրթական ու հոգաբարձուական աշխատանքներով՝ միևնույն ժամանակ պաշտոնավարելով Մելքոնյան եղբայրների ծխախոտի գործարանում: Ձեռնարկած «Արտավազդ Բ.» ողբերգությունը, «Ոսկի բանալի ժողովրդին գործածութեանը համար» թատերգությունը (տպվել է «Ազատ բեմում» 1904, թիվ 28) մնացին լոկ որպես գրական որոնումներ: Այս տարիներին Թեքեյանը մա-

---

[1] «Մեհեան», 1914, թիվ 6, էջ 88:

[2] Տե՛ս «Շիրակ», 1905, թիվ 1:

մուլի զանազան հրապարակումներում իհարկե տպագրեց նաև մի շարք բանաստեղծություններ, որոնց թվում և այն գործերը, որոնք 1943 թ. ընդգրկվեցին «Հայերգութիւն» ժողովածուի «Հայրենի զրոյցներով» շարքում, որոնցից հատկապես առանձնանում են «Հարալէզները» և «Գողթան երգիչներ» գործերը: Վերակազմյալ հնչակյան կուսակցության որոշ անդամների հետ ընդհարվելուց հետո Թեքեյանը 1906 թ. դադարում է խմբագրել կուսակցության օրգան «Ազատ բեմը»: Անցնելով Կահիրե՝ սկսում է սատար կանգնել Եր. Օտյանի «Ազատ խոսքին», թղթակցում «Լուսաբերին», որպես «*չվճարվող խմբագիր*» աշխատակցում 1906-1907 թթ. արդեն Կահիրեում լույս տեսնող «Շիրակին», որը տպագրվում էր, Թեքեյանի խոսքով ասած, Արփ. Արփիարյանի «*հայրութիւնով*» և «*նիհարած*» էջերով: 1906 թ. տարեվերջից Կահիրեում Թեքեյանը լույս է ընծայում «Նոր ժամանակներ» շաբաթաթերթը: Բայց քանի որ հովանավորները չեն կատարում իրենց խոստումները, իսկ հրատարակիչների վերաբերյալ նա վկայում է, որ գործ է ունեցել *«տպագրիչներուն ամենէն խայտառակին, ստախոսին»* հետ՝ կարողանում է տպագրել ընդամենը երեք համար: Թե՛ նյութապես և թե՛ հոգեպես Թեքեյանի վիճակը նախանձելի չէր, ավելին՝ նա *«մեռնում»* էր նաև մտքով: «*... Ես կը մեռնիմ, կը սատկիմ կոր հոս պարզապես,*– գրում է Թեքեյանը Ալեքսանդրիայում գտնվող Միք. Կյուրճյանին,– *եւ եթե մարմինիս դիակն ալ չըլլայ՝ մտքիս դիակը անպատճառ քիչ ատենէն պիտի հանեն Գահիրէէն: Մարմինս ալ արդէն... աւելի աղէկ բաղդի մը վիճակուած չէ: ...Զգեմ փախչիմ պիտի. ասիկա որոշած եմ... անոթութեամբ մահը ապահով է: Ի՞նչ կ՚ընես ըրէ... գործ մը գտի՛ր ինծի հոդ»* (էջ 128):

Ուշագրավ մի մանրամասն. Թեքեյանը իրեն նետել է անգամ թատրոնի գիրկը և որպես դերասան մասնակցել Կահիրեի Հայ թատրոնի բեմադրած՝ Վ. Հյուգոյի գործերից մեկին: Նա վերջին հույսը կապում է իր մի դրամատեր զարմիկի նյութական աջակցության հետ, որը, սակայն, Կահիրե չի գալիս գործ ձեռնարկելու համար: Նույն տարվա հունիսին Թեքեյանը հրաժարվում է ճիվանյան եղբայրների ալկոհոլային վաճառատան իր աշխատանքից՝ դատ բացելով գործատուի դեմ, և դառնացած, իր խոսքով՝ *«յուսահատած»*՝ իր վիճակի մասին գրում. «*Հրեայ պիտի ըլլամ... հրեա ըլլալը» «տաճիկ ըլլալուն» բարեփոխուած մէկ ձեւն է իմ քովս, …Բոլոր դաշնակցականները, բոլոր հարուստները եւ բոլոր չէզոքները …զիս չափազանց կը բանեցնեն- երկու ճամբայ միայն կը տեսնեմ առաջիս. կա՛մ պօմպա նետող յեղափոխականի, կա՛մ… Հրեայ. վերջինը ավելի նոր chie (նորաձեւ) եւ scandaleux (գայթակղիչ) է...*» (էջ 145):

Թեքեյանի հոգեկան ծանր վիճակը իր գագաթնակետին է հասնում՝ կապված Կահիրեում Արփ. Արփիարյանի սպանության հետ՝ 1908 թ. փետրվարի 10-ին[1]: Հուսահատական այս կացությունը խանգարում էր նաև

[1] Այս դեպքից 13 տարի առաջ՝ 1895 թ., նրա դեմ մահափորձ էր կատարվել նաև Կ. Պոլսում, իսկ 1902 թ.՝ Վենետիկում:

ստեղծագործական աշխատանքներին: Սիրանույշի՝ կահիրեյան մի քանի անհաջող ներկայացումներից դառնացած Թեքեյանը գրում է «Մեղայագիր առ տիկ. Սիրանույշը» պանֆլետը: Արդեն վաղուց գրողի կյանքի ամենատիրապետող տարրը անորոշությունն ու անճարակությունն էին: Կարճ ժամանակով «Լուսաբերը» խմբագրելուց հետո՝ նա այդ պաշտոնը հանձնում է Երվանդ Սրմաքեշխանլյանին:

1908 թ. հունիսին Միք. Կյուրճյանին ուղղված նամակում կարդում ենք. «*Փափաքս է ո՛չ Եգիպտոս մնալ, ո՛չ ազգային գործի մէջ ըլլալ*» (էջ 146):

Խոսելով ստեղծագործական կյանքի այս անձուկ շրջանի մասին՝ Թեքեյանը «Լուսաբերի» 1908 թ. թիվ 486-ում տպված հոդվածում ցավով է նշում ոչ միայն իր, այլև ամբողջ հայ գրականությանը վիճակված իրողության մասին. *«Ամբողջ ծովածավալ գրականութիւն մը, Կովկասէն մինչև արտասահմանի ամենէն հայաբնակ կենդրոն. ծնաւ ու սնեցաւ արիւնի և պղծումներու, աւերակաց և դիակոյտերու հոտով»*:

Արտասահմանում գտնված ժամանակ, անկախ իր ունեցած տխուր կամ գոհ օրերից, Թեքեյանը ապրել էր իր ծննդավայրի ու արևմտահայության ճակատագրով: Ուստի և Թուրքիայում տեղի ունեցած «հեղափոխության» հետևանքով նա 1908 թ. օգոստոսին վերադառնում է Կ. Պոլիս: «*Վերջապէ՛ս, վերջապէ՛ս…*»,– գրել է նա այդ օրերին:

Վահրամ Մալեզյանին ուղղած նամակում իր հոգեկան այդ ցնծության վերաբերյալ նա վկայում է. «*Կը քալեմ կոր պարելու պէս… կորսուելու գլխապտոյտն ալ կ'զգամ*»: Սակայն նամակի շարունակության մեջ նաև զգուշացնում է՝ չպետք է մոռանալ, որ «*երկիրնիս Թուրքիա է*», ու մանավանդ դժգոհություն հայտնում որոշ հայ շրջանակների անիրատես ոգևորությունից, որը հաճախ հետևանք էր աչք կապող ու չնչին դեպքերի. «*… առջի օր թուրքերը հալածեր ու ձերբակալեր էին հօճա մը՝ որ քրիստոնէից հակառակ խօսէր է*» (էջ 148):

Գրողը լավ է տեսնում, որ չնայած արտաքին խանդավառությանը՝ քաղաքում տիրող մթնոլորտը վախ ներշնչող է: Սահմանադրությունը, որն իբր «*խզիչ կապանաց*» և «*խորտակիչ շղթայաց*» էր, իրականում նույն համիդյան բռնակալական քաղաքականության շարունակությունն ու կիրառությունն էր: Թեքեյանը Միհրան Տամատյանի հետ աշխատանքներ է տանում Պոլսում Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության մասնաճյուղ բացելու համար, ընդգրկվում է Ազգային կեդրոնական վարժարանի խնամակալական կազմում՝ որպես Եգիպտոսի ներկայացուցիչ, դառնում Ազգային երեսփոխանական ժողովի անդամ և վարում ատենադպիրի պաշտոնը (ատենապետը Եղիշե Դուրյանն էր), աշխատակցում է «Արևելյան մամուլին», «Ժամանակին», Գր. Զոհրապի երաշխավորությամբ մասնակցում «Շիրակ»* գրական-քաղաքական շաբաթաթերթի հրատարակմանը, որը լույս էր տեսնելու

* Կահիրեում լույս տեսնող «Շիրակը» գրական ու ընկերային ամսաթերթ էր և հնչակյանների կողմից նրա խմբագիր Արփ. Արփիարյանի սպանությունից հետո դադարել էր:

որպես ռամկավարների օրգան և ձգտելու էր նպաստել *«ազգային միութեանը»* և *«հայութեան խաղաղ զարգացումին»*, որի տպագրությունը, սակայն, ընթանում է շատ դժվար: Տպագրվելիք նյութեր հայթայթելու համար Թեքեյանը ոչ միայն աղաչում էր հոդվածագիրներին, այլև՝ … սպառնում: 1909 թ. Միք. Կյուրճյանին ուղղած մի նամակում նա գրում է. «… *հոս է, որ ծակ կոշիկներով պտտելու ստիպւեցայ՝ «Շիրակ»-ի ամէնօրեայ ծակերէն գէթ պզտիկները գոցել կարենալու համար*» (էջ 166):

Բնական էր, որ նման վիճակում «Շիրակը» չէր կարող երկարատևել, և վեց ամիս գոյատևելուց հետո՝ 1909 թ., դադարում է լույս ընծայվելուց: Կարճ ժամանակ անց Թեքեյանը սկսում է խմբագրել Շահնազարի «Հայրենիքը»: Թերթի փակման պատճառով թղթակցում է «Բիւզանդիոնին», «Ոստանին», Եր. Օտյանի ընկերակցությամբ խմբագրում նույնպես կարճ կյանք ունեցած «Արեւելք» օրաթերթը:

Եգիպտոսի թեմական ժողովը 1910 թ. Թեքեյանին ընտրում է իր ներկայացուցիչը 1911 թ. Էջմիածնում կայանալիք կաթողիկոսական ընտրություններին: Այս ընթացքում գրողը աշխատակցում է «Շանթին» և «Դաշինքին», տարբեր վայրերում մի շարք ելույթներ ունենում՝ սթափեցնելու համար հայ զանգվածներին նրանց պատած թմրությունից: Հակակառավարական ելույթների համար ձերբակալվում է, սակայն շուտով ազատ արձակվում: 1911 թ. տարեվերջին նա լինում է Թիֆլիսում, Երևանում, Էջմիածնում: Կաթողիկոս է ընտրվում Գևորգ Ե-ն: Թեկնածուներից հատկապես մեծ առարկություն կար Մաղաքիա Օրմանյանի դեմ, որի վերաբերյալ արձագանքել է անգամ Հովհ. Թումանյանը՝ 1911 թ. «Հորիզոնի» թիվ 229-ում տպագրելով հոդված, ուր հաստատում է, որ Օրմանյանը հրապարակավ հայտարարել է, թե Աբդուլ Համիդ II-ի կամքը իր համար նախախնամության կամքն է: Թումանյանը դա համարում է ծանր վիրավորանք և գերագույն անարգանք հայ ժողովրդի պատմությանը: «*Ազգերը կարող են տանել նույնիսկ զարհուրելի կոտորածներ,*– գրում է Թումանյանը,– *բայց զարհուրելի ստորացում՝ ընդունել կամ ներել չեն կարող*»[1]:

Թեքեյանը ծրագրել էր լինել նաև Բաքվում և Մոսկվայում՝ նպատակ ունենալով գործել Հայ բարեգործականին ի նպաստ, որը չի իրականանում: Նույն տարվա դեկտեմբերի վերջերին նա վերադառնում է Կ. Պոլիս: Իր այցելությունների տպավորության տակ գրում է Լևոն Բաշալյանին ձոնված «Արարատի դաշտին մէջ» բանաստեղծությունների շարքը, որում զետեղված են «Լուսաւորչի կանթեղը», մի քանի հայրենասիրական բանաստեղծություններ, այդ թվում և «Հրազդանը», որտեղ գրողը մեծ ընդհանրացում է կատարում՝ «*...Հայութեան Մասիս իրանն է հզոր//Եվ Հրազդան՝ իր աղաղակը անմեռ…*»: Շարքի բանաստեղծությունների հիմնական գաղափարը արտահայտվում է փառավոր անցյալի և տխուր ներկայի հակադրությամբ, գերագույն ցանկության՝ *«այսօրն»* չերկարելու:

---

[1] Հովհ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Երևան, 2016, էջ 326:

1912 թ. Թեքեյանը կրկին անցնում է խմբագրական աշխատանքի՝ «Լուսարձակում», որը շուտով միանում է «Արեւելքին»:

1913 թ. նա ուսուցչություն է անում Կ. Պոլսի Նոր դպրոցում և Հինդիլյան վարժարանում, վարում Ազգային հիվանդանոցի գրասենյակի տեսչությունը, իր մասնակցությունը բերում Կեդրոնական վարժարանի հիմնադրման 25-ամյակին նվիրված միջոցառումներին: Դ. Վարուժանի, Ահարոնի, Հ. Ճ. Սիրունու և մի շարք այլ մտավորականների հետ հիմնում է «Աստեղատունը» (ատենապետ է ընտրվել Կոմիտաս վարպետը), որը, սակայն, ունենում է ընդամենը մի քանի նիստ և դադարում գործելուց: Ստեղծագործական առումով ևս տարին արդյունավետ էր. բավական է ասել, որ նա գրում է իր լավագույն գործերից մեկը՝ «Տաղ հայերէն լեզուին» բանաստեղծությունը. «*Մրգաստանի՛մը նման կը սիրեմ քեզ, Հա՛յ Լեզու…*»:

1913 թ. սեպտեմբերին Թեքեյանը մեկնում է Կեսարիա և հինգ ամիս զբաղեցնում Սուրբ Կարապետ վանքի վարժարանի տեսուչի պաշտոնը: Այդ օրերին իր ապրած հուզումների ու գործունեության մասին նա գրեց «Կեսարիա» օրագրություն-ուղեգրությունում, որը տպագրվեց տարիներ անց՝ 1921 թ., Կ. Պոլսի «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» թերթում, և որը 2016 թ. Գր. Պըլտյանի առաջաբանով և Ս. Տեյիրմենճյանի ջանքերով առանձին գրքով լույս ընծայվեց Ստամբուլում:

Կ. Պոլսի Ազգային երեսփոխանական ժողովը 1914 թ. սկզբին Թեքեյանին ընտրում է իր մնայուն լիազոր ներկայացուցիչը Երուսաղեմի պատրիարքարանում: Մինչ մեկնելը Թեքեյանը շուրջ երեք ամիս մնում է Կ. Պոլսում, ողջունում Կ. Զարյանի հիմնադրած «Մեհեան» հանդեսի հռչակած գրական հանգանակը, որը նպատակ ուներ արտահայտելու հայ ոգին, մշակելու «*կենսանորոգ պատվաստումով մը հայ լեզուն*», «*Զուտ գրականութիւնը հեռու պահել քաղաքականութենէ եւ լրագրութենէ*»[1]: Թեև Թեքեյանի հակառակորդները նրա անձի շուրջ մղում էին «*անորակելի*» պայքարներ, այնուամենայնիվ նույն թվականի ապրիլի վերջերին նա ճանապարհ է ընկնում և մայիսի 6-ին հասնում Երուսաղեմ:

Կատարված եղծարարությունների հետևանքով միաբանությունը երկպառակտվել էր: Թեքեյանը պետք է հանդարտեցներ այն կռիվը, որն ընթանում էր վանքում «*խարազանով ու գավազանով*», իրականացներ Ազգային ժողովի ընդունած՝ վանքի նոր կանոնագրի կիրառումը, կասեցներ շահամոլ վարդապետների կողմից կատարվող մսխումները: Կրոնավորների մի մասը, սակայն, և հատկապես Օրմանյանը, որն ըստ երևույթին չէր մոռացել նաև իր կաթողիկոսական ընտրության տապալումը, թույլ չեն տալիս նրան իրականացնել իր պարտականությունները, որի պատճառով կողմերի միջև հակասությունները սրվում են: Բախումը այնքան մեծ էր, որ Թեքեյանը նույն տարվա հունիսին հրաժարական է տալիս և անձնական իրերը թողնելով Երուսա-

[1] Տե՛ս «Մեհեան», 1914, թիվ 1:

ղեմում՝ մեկնում Եգիպտոս՝ սպասելով Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովի ատենապետ Գաբրիել Նորատունկյանի և Զավեն պատրիարքի նոր տնօրինություններին: Նույն տարվա օգոստոսի 2-ին սկսված Առաջին համաշխարհային պատերազմը այլևս անհնարին է դարձնում Թեքեյանի վերադարձը: Այդ հեռացումը նրան փրկում է հայ մտավորականների խմբերի հետ դեպի Չանղըրիի անապատները աքսորվելուց և եղեռնի զոհ դառնալուց:

Այս ժամանակաշրջանում Թեքեյանի ծավալած ազգային, մանկավարժական, խմբագրական ու հասարակական բազմաբնույթ գործունեության մեջ առանձնակի երևույթ է դառնում 1914 թ. Կ. Պոլսում տպագրված բանաստեղծությունների երկրորդ գիրքը՝ «Հրաշալի Յարութիւն» վերնագրով: Ժողովածուի վերջում հեղինակի գրչին պատկանող «Իբրեւ վերջաբան» հակիրճ գրությունում նշվում էր, որ վերնագրի *«Հրաշալին անշուշտ «հրաշքով» կը նշանակէ»*[1]: Գրքի հիմնական առաջադրանքը եղերական, բայց և ըմբոստ ներկայի պատկերմանն էր ուղղված: Այն պետք է ունենար «Յարալէզք» վերնագիրը, սակայն տպագրելուց առաջ Թեքեյանը փոխել է այն՝ պահպանելով հարության իմաստը: Ըստ նրա՝ բանաստեղծությունը ևս մի *«յարալէզ»* է, որ կենդանություն պիտի տա ազգին, վերընձյուղի նրա ազգային ու մարդկային արժեքները, բորբոքի հայրենասիրական հույզերն ու ապրումները, նրան մղի նվիրումների: Թեքեյանի գիրքը համահունչ էր այդ նույն տարիներին Վահան Տերյանի հրատարակած «Երկիր Նաիրի» շարքի արծարծած տրամադրություններին: Նույն ժողովուրդն էր ու նույն ճակատագիրը: Երկուսի գործերում Հոգևոր Հայաստանի փրկարար տեսիլը հայրենիքի գոյության խարիսխի համարժեք ուներ, որի վրա պետք է կառուցվեին ազգի հավերժացման հիմքերը:

Պողոս Նուբար փաշայի երաշխավորությամբ 1915 թ. Թեքեյանը Միհրան Տամատյանի, Վահան Մալեզյանի և այլոց հետ դառնում է Հայ բարեգործական ընկերության և Ռամկավար Ազատական կուսակցության օրգան «Արեւ» հասարակական-քաղաքական և գրական երկօրյա թերթի հիմնադիրը: Նա թերթը խմբագրում է մինչև 1918 թ. (ընդհատումներով այն խմբագրել է նաև 1926-1931 թթ. և 1935 թ. մինչև իր կյանքի վերջը՝ 1945 թ.): Իր առաջին հոդվածներից մեկում Թեքեյանը այն միտքն է հայտնում, որ «*այնտեղ* (երկրում) *մեր արմատներուն կտրուիլը՝ մեզ ալ կսպանե այստեղ*»[2], իսկ նույն տարվա դեկտեմբերի 15-ի համարում գրում է. «… *այս մեկ տարին, որ անցավ, դարեր արժեց մեզի, դարերու արդյունքը սրբեց ու տարաւ Հայ կոչուող ազգի մեջէն*»:

Այս շրջանում գրած իր հոդվածներից մեկում նա այն միտքն է հայտնում, որ ապրիլյան եղեռնը չպետք է դիտել որպես զուտ ազգային կորուստների փաստ, որ այն մեծ չարիք է՝ ուղղված ամբողջ մարդկության դեմ ու ոչնչացում ամեն արդարի ու գեղեցիկի:

1916 թ. սեպտեմբերի 7-ին Թեքեյանը կուսակցական հակառակորդների

---

[1] **Թէքէեան Վ.,** Հրաշալի Յարութիւն, Կ. Պոլիս, 1914, էջ 194:

[2] Տե՛ս «Արեւ», 21 հուլիսի 1915:

կողմից ենթարկվում է հարձակման, որի հետևանքով զրկվում է իր աջ աչքից, որը բացասական հետք է թողնում նրա թե՛ անձնական և թե՛ ստեղծագործական ամբողջ կյանքի վրա: Դաշնակցական և Ռամկավարական կուսակցությունների միջև պայքարը այնքան էր սրվել, որ հակառակորդ կուսակցությունը սպառնում էր Թեքեյանի մյուս աչքը ևս հանել:

1931 թ. Շ. Շահնուրին Կահիրեից գրած մայիսի 27 թվակիր իր նամակում Թեքեյանը ուշագրավ մի դեպք է պատմում իր դեմ կատարված այդ չարագործության վերաբերյալ: Լարված աշխատանքներից ու ծայրագույն հոգնածությունից հանգիստ գտնելու բաղձանքով նա փափագել է *«աղուոր տեղ մը»* գտնել, և Ալեքսանդրիայի հիվանդանոցներից մեկի առջևով անցնելիս նրա մոտ միտք է ծագել, որ այդ հանգստավետ *տեղը* հիվանդանոցում կարող է գտնել: «*...Եւ 8 օր չանցած,*– գրում է Թեքեյանը,– *աչքս հանեցին ու այդ հիվանդանոցը տարուեցայ»* (էջ 325):

Իսկ 1936 թ. դեկտեմբերի 29-ին Արշամ Տատրյանին ուղղված նամակում Թեքեյանը գրում է, որ պետք է զգույշ լինել, որ նրա մայրը չիմանա (Ա. Տատրյանը նույնպես դժբախտ դեպքի հետևանքով կորցրել էր իր տեսողության մեծ մասը), քանի որ «*շատ պիտի յուզուի եւ տագնապի*»: Այդ նամակում նա պատմում է նաև իր մոր մասին. «*Իմ մայրս բարեբախտաբար ծեր էր, երբ պատերազմէն վերջ Պոլիս դարձայ ու անգամ մը միայն հարցուց, թե ինչո՞ւ քիչ մը ճերմակ է մէկ աչքիս բիբը եւ թէ նո՞ւազ լաւ կը տեսնեմ արդեօք այդ աչքով. երկու բառով ապահովցուցի, եւ ա՛լ ատկէ վերջ չխօսեցաւ այդ մասին*» (էջ 409): Իր դեմ կատարված այդ հարձակումը (գիշերով Թեքեյանի գլխին խփել էին երկաթե ձողով և ընկած թողել ամայի փողոցում) հետագայում՝ 1922 թ. և 1925 թ., բանաստեղծի համար խթան դարձավ գրելու «Մարկ Ֆորթունի արկածը» անավարտ վիպակը (տպագրվել է Կ. Պոլսի «Բարձրավանք» հանդեսում) և հայ գրականության չքնաղ գործերից մեկը՝ «Մէկ հատիկս».

Իմ մեկ հատի՛կս հիմա, որ կդիտես զիս վհատ
Հայելիին ջրհորեն
Քեզի նման ու քեզմով կնայիմ ես ալ վրադ
Երկարորեն, ծանրորեն...

Աչքի վիրահատություն տանելով և երեք շաբաթ բուժվելուց հետո Թեքեյանը դուրս է գրվում հիվանդանոցից: Որոշ ժամանակ անց Փարիզի Ազգային պատվիրակությունը նրան ուղարկում է Կիպրոս՝ Արևելյան (հայկական) լեգեոնի կազմակերպչական աշխատանքներին մասնակցելու և Նիկոզիայում կուսակցության մասնաճյուղ հիմնելու համար: Այստեղ նա մնում է շուրջ ութ ամիս, աջակցում Կիլիկիա մեկնող կամավորական ջոկատներին: Թեքեյանն անդամագրվում է ճակատ մեկնողների շարքերում*, և միայն մեծ

* Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս ԳԱԹ, Վ. Թեքեյանի ֆոնդ, թ. 64, էջ 595-609:

դժվարություններով են նրան հետ պահում այդ մտքից:

1918 թ. տարեսկզբին Երուսաղեմը գրավում են դաշնակից զորքերը. Թեքեյանը այս անգամ ուղարկվում է ավերված Երուսաղեմ՝ Ազգային պատվիրակության և անգլիական զինվորական հրամանատարության միջև համագործակցություն ծավալելու և հայ գաղթականների վիճակը կարգավորելու նպատակով: Ինչպես նա գրում է, հետպատերազմյան Երուսաղեմի «*…ամբողջ շնորհը, մաքրութիւնն ու մեծութիւնը Յիսուս հետը առէր երկինք* համբարձէր էր» (էջ 200): Այստեղ Թեքեյանը հանդիպում է ունենում դաշնակից զորքերի հրամանատար գեներալ Է. Ալենբիի հետ՝ հայ ժողովրդի ազգային իրավունքների հարցերով: Երկու ամիս մնալուց հետո՝ օգոստոսին, նա վերադառնում է Եգիպտոս և վերստանձնում «Արեւի» խմբագրապետությունը:

Այս ընթացքում Թեքեյանը անդամակցում է հասարակական և ազգային մի շարք կառույցների՝ «Եգիպտահայ նպաստամատույցին», «Հայ ակումբին», Կ. Պոլսի Ազգային ժողովին, «Ազգային միությանը», Պողոսյան վարժարանի հոգաբարձությանը: Եգիպտոսի ազգային միությունը Թեքեյանին ընտրում է իր ներկայացուցիչը՝ Փարիզի ազգային պատվիրակությունում (նախագահ՝ Պողոս Նուբար փաշա) աշխատելու համար: 1919 թ. դեկտեմբերին Թեքեյանը մեկնում է Փարիզ, այստեղ Ա. Չոպանյանի հետ համագործակցում «Հայ ազգային ազատական միության» ստեղծման համար, որի նպատակն էր միաբանել արտասահմանում գործող հայկական բոլոր կուսակցություններին ու խմբավորումներին: Պաշտոնի բերումով նույն տարում նա մեկնում է Երևան՝ Առաջին հանրապետության կառավարական շրջանակների հետ բանակցություններ վարելու թուրքահայերին վերաբերող խնդիրների և 1918 թ. մայիսի 28-ի հռչակագրից բխող՝ արևմտահայերի ընդգրկումով կառավարության և խորհրդարանի նոր կազմեր ստեղծելու վերաբերյալ: Այստեղ Թեքեյանը բանախոսում է Դ. Վարուժանի ստեղծագործությունների մասին, հանդիպում է Կ. Զարյանի հետ, ով այստեղ էր գտնվում որպես իտալական թերթերի թղթակից: Նրանք այցելում են Գևորգ Ե կաթողիկոսին: Իր երևանյան բանակցությունների վերաբերյալ, որը քիչ հաջողություններ ունեցավ, Թեքեյանը ծավալուն հաշվետվություն է ներկայացնում Ազգային պատվիրակությանը և հունիսին հրաժարական տալիս:

1919 թվականը Թեքեյանի կյանքի նշանակալից տարեթվերից է: Փարիզում նա տպագրում է բանաստեղծությունների «ԿԷս-գիշերէն մինչեւ արշալոյս» գիրքը, որը արտահայտում է եղեռնի արհավիրքների պատճառած մտորումներն ու ապրումները, ինչպես նաև ետեղեռնյան կյանքի սպասումները, իր խոսքով ասած՝ *«արշալոյսները»*, դրանց գեղարվեստական անդրադարձումները հեղինակի ներաշխարհում: Ա. Չոպանյանին ուղղած 1918 թ. հուլիսի 20 թվակիր նամակում Թեքեյանը պատրաստվող գիրքը բնութագրում է որպես «*վկայարան մեր այս քանի մը տարուան մէջ կրած յուզումներուն*» (էջ 200):

1920 թ. վերջերին Թեքեյանը վերադառնում է Կ. Պոլիս, ընտրվում Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության կենտրոնական վարչության

անդամ, ստանձնում «Ժողովուրդի ձայնը» թերթի խմբագրապետությունը՝ թերթում տեղ տալով նոր-նոր գրական կյանք մտնող Զ. Սյուրմելյանին, Վ. Շուշանյանին, Զ. Որբունուն, Ն. Սարաֆյանին, Պ. Զարոյանին և այլոց: Սկսում է ձեռնարկել Ռամկավար և Ազատական կուսակցությունների միացման գործը, որն իրականություն էր դառնալու 1921 թ. հոկտեմբերին:

1921 թ. օգոստոսին Սկյուտարի հայտնի հրդեհի պատճառով այրվում է Թեքեյանի ձեռագրերի մի մասը: Նույն ամսին նա վիրահատության է ենթարկվում: Նոյեմբերին Հովհ. Թումանյանը որպես Հայ օգնության կոմիտեի (ՀՕԿ) նախագահ ժամանում է Կ. Պոլիս՝ Հայաստանին սննդամթերք, դեղորայք, հագուստ և այլ իրեր հայթայթելու համար: Նրա պատվին կազմակերպված թեյասեղանի ժամանակ միտք է հղանում ստեղծել «Հայ արվեստի տուն» միությունը, որը պետք է համախմբեր թե՛ արևմտահայ և թե՛ աշխարհի չորս ծագերում ցրված հայ գրողներին ու արվեստագետներին, կազմակերպեր նրանց գործերի տպագրությունն ու ցուցադրումը, նպաստեր հեղինակների ճանաչմանը: Նախագահ է ընտրվում Հովհ. Թումանյանը, ատենապետ՝ Վ. Թեքեյանը: Արվեստի տան անդամներ են դառնում Կ. Զարյանը, Փ. Թերլեմեզյանը, Հ. Օշականը, Հ. Ճ. Սիրունին և այլք:

1922 թ. սեպտեմբերին Թեքեյանը ընտրվում է Ազգային Կեդրոնական վարժարանի տեսուչ, դառնում Ազգային երեսփոխանական ժողովի անդամ, Հ. Օշականի, Շ. Պերպերյանի, Գ. Գավաֆյանի հետ մասնակցում Կ. Զարյանի հիմնադրած «Բարձրավանք» հանդեսի աշխատանքներին, որի առաջին համարում տպագրում է «Մայրերը» թատերգությունը, ուր պատկերվում են Արփ. Արփիարյանի և Վահե Արզույանի մայրերի ողբերգական կացությունը (վերջինիս որդին սպանել էր առաջինի որդուն): Ուշագրավ է, որ Թեքեյանը հանդեսի խմբագրական կազմի անդամներին անվանում է «*հիմնադիր-տիրացուներ*», քանի որ իրենք ոչ միայն չպիտի վարձատրվեին, այլև 25-ական ոսկի պետք է տային ամսագիրը լույս ընծայելու համար:

Ինչպես ամբողջ Թուրքիայում, այնպես էլ Կ. Պոլսում քաղաքական վիճակը աստիճանաբար ողբերգական էր դառնում: Անատոլիայում ծավալված քեմալական շարժումն արդեն հասել էր մայրաքաղաքի մատույցները: Թեև շարունակվում են լույս տեսնել հայ մամուլի զանազան օրգաններ, սակայն գրական ու մշակութային կյանքը օրհասի վերջին պահերն էր ապրում: Մարդիկ նորից են բռնում փախուստի ճամփան: Կ. Պոլսում գտնվող հազարավոր որբեր ապաստան են որոնում Հունաստանում ու աշխարհի չորս ծագերում:

1922 թ. նոյեմբերին՝ մինչև քեմալականների կողմից Կ. Պոլսի գրավումը (22-ին), Թեքեյանը հեռանում է այդտեղից՝ իր հոգում պահելով վերադարձի բոլոր հույսերը: Կ. Պոլիսը՝ «*տեսիլքն ընտանի*», որը թեև անդարձ խլվել էր նրանից՝ ինչպես նշում է 1923 թ. գրած իր բանաստեղծություններից մեկում՝ «*... գուցե քեզ շա՛տ սիրելուն ալ համար*», բայց որը հար ապրելու էր նրա մեջ.

Ճի՞շտ է, ըսէ՛, որ ա՛լ մենք օտարնե՛ր ենք իրարու
Եւ իրաւունք չունի՛մ ես քու հողիդ մէջ թաղուելու...
(«Պոլիս»)

Այն, ինչ արել ու գրել էր Թեքեյանը մինչ այս կապված էր արևմտահայ մարդու ու արևմտահայ գրականության հետ: 1922 թվականից հետո Թեքեյանի համար սկսվում է կյանքի մեկ այլ շրջան, որը սփյուռքահայ կոչվեց:

Իր «Կեսարիա» օրագրությունում դեռևս 1913 թ. Թեքեյանը գրել է. «*Պոլիսը՝ ծննդավայրս, Հայաստանը՝ հայրենիքս, ալ ուրիշ սիրոյ մը համար տեղ չկար սրտիս մէջ*»[1]: Առաջինը խլեցին նրանից: Հիմա արդեն մնալու էր միայն մեկը՝ Հայաստանը:

***Арцрун Авагян* – Ваган Текеян: возделыватель западноармянской жизни и литературы (от Константинополя до Константинополя: 1878-1922 гг.)**

В статье представлен один период творческой жизни западноармянского литературного, общественного, культурного и национального деятеля диаспоры Вагана Текеяна (1878-1922 гг.). Несмотря на то что Текеяну выпало прожить относительно дольше (около 66 лет), чем многим из его литературных современников, тем не менее, его жизнь была полна многочисленных лишений и психических страданий. Даже проживая в разных странах и городах, Текеян в качестве своей заветной цели поставил перед собой задачи, выдвинутые западноармянской и константинопольской жизнью. Его деятельность, развернутая во имя национального возрождения, была одним из важнейших векторных событий, предопределившим ход западноармянской литературы в первые два десятилетия XX века и в дальнейшем послужившим фундаментом для формирования и развития литературы диаспоры.

***Artsrun Avagyan* – Vahan Tekeyan – the Toiler of Western Armenian Life and Literature (from Constantinople to Constantinople, 1878-1922)**

The article depicts a certain period (1878-1922) of Vahan Tekeyan's creative life, a Western Armenian and Diasporan Armenian literary, social, cultural and national figure. Although Tekeyan lived relatively longer (about 66 years) than many of his literary contemporaries, his life was full of many deprivations and mental sufferings. Even while living in different countries and cities, Tekeyan always had a dedication to the problems of Constantinople Armenians and Western Armenians. The activities which he carried for the sake of national regeneration were one of the crucial events, which shaped the Western Armenian literature in the first two decades of the 20th century and later on served as a basis for the formation and development of Diasporan Armenian literature.

[1] **Թեքէեան Վ.**, Կեսարիա, Իսթանպուլ, 2016, էջ 47: